ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1199-Ա

ԱՐԹՈՒՐ ՀԵՆՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ կետի բ) ենթակետով, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Արթուր Հենրիկի Խաչատրյանի (ծնված՝ 24.10.1965 թ.) դիմումը, չափագրման համաձայնությունը և 2024NLPDAT (25.09.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնքի Արջուտ գյուղի 3-րդ փողոց 4 հասցեում գտնվող 06-019-0045-0005 ծածկագրով 0.0236 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սահմանները՝ համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:

2.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի Արջուտ գյուղի 3-րդ փողոց 4 հասցեում գտնվող Արթուր Հենրիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական՝ N 1930274) 06-019-0045-0005 ծածկագրով 0.0236 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, 2011թ.-ին կառուցված ընդհանուր 192 քմ արտաքին չափերով բնակելի տունը և 1.30 քմ չափերով պարիսպը:

3.Պարտավորեցնել Արթուր Հենրիկի Խաչատրյանին համայնքին (հաշվեհամար՝ 900235422301 ինքնակամ կառույցի օրինականացում) վճարել 2011թ-ին կառուցված ընդհանուր 192 քմ արտաքին չափերով բնակելի տան օրինականացման վճարը ՝

167810 ՀՀ դրամ և 1.30 ք/մ չափերով պարիսպի օրինականացման վճարը՝ 690 ՀՀ դրամ: Ընդհամենը՝ 168500 ՀՀ դրամ:

4.Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

08 հոկտեմբերի 2024
գ. Փամբակ